ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

19 ապրիլի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

57
(2723)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 177

Նիկոլ Փաշինյանը երեկ Ազգային ժողովի ամբիոնից հերթական անգամ հանդես եկավ հայտարարություններով, որոնք իրականությանը չեն համապատասխանում: Մասնավորապես, խոսքը 2021 թվականին Սերժ Սարգսյանի կողմից հրապարակված մի ձայնագրության մասին է, որտեղ Նիկոլ Փաշինյանը խոսում է Ղարաբաղի հարցից եւ ասում, թե՝ «ինձ գժի տեղ կդնեմ»: Եվ, ահա, երեկ խորհրդարանում Փաշինյանը հանկարծ հիշեց մոտ 2 տարի առաջ հրապարակված ձայնագրությունը՝ հարցադրումով հայտարարելով. «Կարո՞ղ է այդ մարդը մեր խմբակցության անդամ է եղել, հիմա էլ ուրիշ խմբակցության անդամ է: Եկել է, հեղափոխական թիմի նիստը ձայնագրել է, տարել տվել է Սերժ Սարգսյանին»:

Սա լկտի սուտ է մի քանի պատճառով. նախ՝ ձայնագրության հրապարակումից հետո ՀՀԿ-ական շատ գործիչներ, այդ թվում՝ Արմեն Աշոտյանը, հրապարակել էին տեղեկություններ այն մասին, որ այդ ձայնագրությունը արվել է նեղ շրջանակով հանդիպման ժամանակ, որին ներկա է եղել պատվիրակություն Արցախից՝ Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ:

Ստել է Նիկոլ Փաշինյանը, քանի որ ձայնագրությունը բավականին մոտիկից է արված, իսկ «հեղափոխական նիստերի» ժամանակ Նիկոլ Փաշինյանը միշտ խոսել է ամբիոնի մոտից կամ դիմացի սեղանի մոտից (ինչպես վերջերս ադրբեջանի դրոշի գույներով ժամացույցի դիմաց էր նստած), եւ նույնիսկ տեսականորեն անհնար էր, որ որեւէ պատգամավոր կարողանար ձայնագրել Փաշինյանին այդքան մոտիկից եւ պարզ լսողությամբ:

Ստել է Փաշինյանը, քանի որ ձայնագրության հրապարակման ժամանակ հենց իրենք ՔՊ ներսում քննարկել են բոլոր վարկածներն ու բացառել պատգամավորներից որեւէ մեկի դերակատարության տարբերակը՝ գալով եզրակացության, որ իրեն գժի տեղ դնելու մասին Փաշինյանը խոսել է Կառավարությունում՝ նեղ կազմում:

Եւ ուրեմն ինչո՞ւ էր նա երեկ զգույշ, հարցական ձեւակերպումներով, առանց անուն տալու թիրախավորում ընդդիմադիր պատգամավորներից մեկին. նշանակում է, որ կա քաղաքական որոշում ընդդիմադիր պատգամավորի նկատմամբ նոր արշավի: Իր ագրեսիայով նա տվեց մեկնարկը: Մենք կհետեւենք զարգացումներին:

Նիկոլ Փաշինյանն այեւս չի կարողանում թաքցնել իր սեփական վախերը: Սրա մասին վկայում է նաեւ երեկվա՝ մեծաթիվ թիկնապահների ու ոստիկանների ուղեկցությամբ խորհրդարան գալը: Փաշինյանն այս անգամ իսկապես գերազանցել էր ինքն իրեն. նախ՝ նրա՝ երեկվա խորհրդարան գալն աննախադեպ էր նրանով, որ պատմության մեջ առաջին անգամ վարչապետի մեծաթիվ թիկնապահներ հայտնվել էին ԱԺ դահլիճի ներսում: Պատմության մեջ չի եղել դեպք, որ վարչապետի թիկնապահը մտնի ԱԺ նիստերի դահլիճ, իսկ Փաշինյանն այս հարցում էլ է որոշել «պատմություն» կերտել: Ֆրակցիաների շարքերից յուրաքանչյուրի վերեւում կամ ներքեւում նստած էին նրա թիկնապահները եւ հսկում էին պատգամավորներին: «Ժողովուրդ» օրաթերթը նկատեց նաեւ, որ ԱԺ դահլիճ մտնող բոլոր մուտքերի մոտ, բացի ՊՊԾ աշխատակիցներից, կանգնած են նաեւ Փաշինյանի՝ քաղաքացիական հագուստով, բայց զինված թիկնապահները: Այս աստիճան ուժեղացված անվտանգությունը վկայում է մեկ բանի մասին՝ Փաշինյանը վախենում է, իսկ թե ինչից, միայն նա կիմանա: Փաստացի հեղափոխությունից հետո մետրոներով ու հեծանիվներով շրջող իշխանության ներկայացուցիչներն այլեւս առանց թիկնապահների քայլ չեն անում:

Շուրջ երկու տարի պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի քրեական գործով կալանավորված ԳՇ ավիացիոն վարչության նախկին պետ Ավետիք Մուրադյանի դստերը ազատել են աշխատանքից: Նա աշխատում էր ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ կալանքի տակ գտնվող վարչության նախկին պետի դուստրը ապրիլի 16-ին պետք է կապիտանի կոչում ստանար, սակայն ապրիլի 13-ին լրացել է պայմանագրի ժամկետը, եւ ԱԻՆ նորանշանակ նախարար Կամո Ցուցուլյանը չի ցանկացել պայմանագիրը շարունակել նրա հետ, ՊՆ պաշտոնյայի դստերը ազատել է պաշտոնից՝ անգամ չտալով կապիտանի կոչում: Սա եւս՝ քաղաքական ռեպրեսիաների շարքից:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ընդդիմադիր «Հայաստան» խմբակցությունը մտադիր է ժամանակավոր քննիչ հանձնաժողով ստեղծելու նախաձեռնությամբ հանդես գալ: Հանձնաժողովն ուսումնասիրելու է պատգամավորների կողմից թույլ տված վարքականոնների խախտման բոլոր դեպքերը: Տեղեկացանք, որ ընդդիմադիրների այս նախաձեռնության համար հիմք են հանդիսացել, մասնավորապես, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի մասնակցությամբ՝ Երեւանի կենտրոնում քաղաքացուն վիրավորելու եւ նրա վրա թքելու դեպքը, ՄԻՊ թեկնածուի քննարկման ժամանակ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նիստին ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի խուլիգանական վարքագիծը, ինչպես նաեւ փետրվարի 3-ին Լաչինի միջանցքի թեմայով խորհրդարանական լսումների ժամանակ ՔՊական պատգամավոր Գուրգեն Արսենյանի հայտարարությունը, թե 120 հազար արցախցու համար չարժէ ռիսկի տակ դնել 3 միլիոն հայաստանցու ճակատագիրը: Ահա այս միջադեպերն ուսումնասիրելու հարցով ընդդիմադիրներն առաջարկում են ժամանակավոր հանձնաժողով ստեղծել: «ԱԺ կանոնակարգ» օրենքը սահմանում է, որ ժամանակավոր հանձնաժողովը ստեղծվում է Ազգային ժողովի որոշմամբ, իսկ հանձնաժողովը ստեղծելու նախագիծ ներկայացնելու իրավունքն ունի խմբակցությունը. նախաձեռնողը «Հայաստան» խմբակցությունն է: Ժամանակավոր հանձնաժողովի անդամների թիվը եւս սահմանվում է Ազգային ժողովի որոշմամբ, իսկ հանձնաժողովի կազմը հաստատում է Ազգային ժողովի նախագահը: Ըստ նույն օրենքի՝ հանձնաժողովում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ, ինչն էլ ենթադրում է, որ ՔՊականները մեծամասնություն են կազմելու ստեղծվելիք հանձնաժողովում: Պարզ չէ՝ իշխող մեծամասնությունը անդամներ ընդհանրապես կտա այդ հանձնաժողովին, թե այն կմնա այդպես էլ չձեւավորված:

ԹԵԺԱՑՈՒՄ ԿԼԻՆԻ

ՈՒԺՈՎ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՀԵՏ ՄՂԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը Հայաստանի սահմաններին արձանագրված վերջին միջադեպերի շուրջ զրուցել է ՀՀ նախկին վարչապետ, Կառավարման ակադեմիայի դրոֆեսոր Խոսրով Հարությունյանի հետ:

-Պարոն Հարությունյան, վերջերս հերթական անհասկանալի միջադեպն արձանագրվեց մեր սահմաններին: Ապրիլի 10-ին ադրբեջանցի երկու զինծառայող անարգել հատել էին մեր սահմանը, մտել մեր տարածք՝ Սիսիանի հատվածից, բնակիչների տներն էին մտել: Նրանցից մեկը հենց դեպքի նույն օրը ձերբակալվել էր, իսկ մյուսը շուրջ երեք օր շրջել էր Սիսիանի գյուղերում, եւ մեր տարածք մտնելուց երեք օր անց նոր հայտնաբերվել էր, այն էլ՝ ոչ թե իրավապահների, այլ քաղաքացիների կողմից: Ի՞նչ գնահատական կտաք սրան. մեր անվտանգությունն իսկապե՞ս այդքան վատ վիճակում է:

-Շատ խորաթափանց պետք չէ լինել գնահատական տալու համար. կարելի է ասել, որ մեր սահմաններն այնքան թափանցիկ են, որ ով չի ալարում, կարող է մտնել ու կիլոմետրերով առաջանալ: Այդ դեպքը խոսում է այն մասին, որ մեր անվտանգությունը՝ սահմանների անձեռնմխելիության կոնտեքստում հատկապես, բացարձակ բարձիթողի վիճակում են, այլ բան ասել պետք չէ: Ամենազարմանալին այն է, որ իրավապահները եւ ԱԱԾ-ն փնտրում էին դիվերսանտներին, բայց քաղաքացիներն են ի վերջո գտնում նրանց, վնասազերծում եւ հանձնում իրավապահներին. սա իրողություն է: Խիստ մտահոգիչ է, որ մեր սահմանները պաշտպանված չեն:

-Պարոն Հարությունյան, կարող ենք նաեւ արձանագրել, որ, օրինակ, երբ որեւէ քաղաքացի հայիոյում է վարչապետին կամ իշխանության ներկայացուցիչներից որեւէ մեկին, իրավապահներին հաջողվում է ժամերի ընթացքում գտնել այդ քաղաքացուն եւ պատասխանատվության ենթարկել, իսկ այս դեպքում, երբ հարցը վերաբերում է անվտանգային լուրջ հարցին, իրավապահները, կարծես, ընդհանրապես չեն էլ շտապում:

-Սա նշանակում է, որ քաղաքացիները կարող են լուրջ պահանջներ ներկայացնել ԱԱԾ-ին: Ոստիկանությունը եւս պետք է աշխատեր՝ ԱԱԾ-ի հետ համագործակցությամբ, բայց համար մեկ խնդիրն այս դեպքում՝ ԱԱԾ-ին. սահմանների անվտանգությունը նրանք են երաշխավորում: Ակնհայտ է այս դեպքով նաեւ Նախիջեւանից Հայաստանի վրա ճնշումները բարձրացնելու առաջին քայլը: Ես համոզված եմ, որ առաջիկայում ականատես կլինենք այդ ուղղությունից մեծ ճնշումների՝ թե՛ զինվորականների մասնակցության, թե՛ հետեւանքների առումով: Այսինքն՝ Նախիջեւանի կողմից այս ներթափանցումը դեռ միայն «ծաղիկներն են», կտեսնեք՝ ինչպես է այդ հատվածում իրավիճակը թեժանալու, որովհետեւ այնտեղ կա Տիգրանաշեն. իրենք ամեն ինչ անելու են Տիգրանաշենը վերցնելու համար:

-Այսինքն՝ թշնամու հաջորդ թիրախը Տիգրանաշե՞նն է լինելու:

-Ես ենթադրում եմ՝ մենք կունենանք թեժացում Նախիջեւանի հատվածում:

-Պարոն Հարությունյան, 44-օրյա պատերազմից հետո հակառակորդը մեր ինքնիշխան տարածքում՝ Սյունիքի եւ Գեղարքունիքի հատվածներում, ապօրինի առաջ է եկել: Ի՞նչ եք կարծում, բանակցությունների միջոցով հնարավո՞ր է նրան ստիպել, որ վերադառնա ելման դիրքեր:

-Այս հակառակորդը չի գնա, ուզում եք՝ բանակցեք, միեւնույնն է, Ալիեւը հետ գնացող չէ: Ես կարծում եմ՝ մենք ուժով կարող ենք հետ մղել նրանց, եթե ճիշտ կազմակերպենք ոչ միայն ռազմական քայլերը, այլ նաեւ միջազգային հանրության անհրաժեշտ աջակցությունն ապահովենք:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՄԲ

Խաղաղություն նշանակում է հարաբերությունների կարգավորում Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ. այս մասին Ազգային ժողովի արտահերթ նիստին՝ «Կառավարության 2022թ. ծրագրի (2021-2026թթ.) ընթացքի եւ կատարողականի մասին» հաշվետվության քննարկման ժամանակ՝ ապրիլի 18-ին, ասել է հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Կառավարության ղեկավարի խոսքով՝ Հայաստանը պարտադիր կարգով պետք է կարգավորի հարաբերությունները հարեւանների հետ: «Պետք է նշեմ մեր բացառիկ պատասխանատվությունը մարդկանց առջեւ, որոնք հավատում են Հայաստանի ապագային: Պետք է նաեւ նշեմ մեր պատասխանատվությունը նաեւ բոլոր նրանց առջեւ, որոնք կասկածանքով են վերաբերվում այդ ապագային: Եվ այդ պատասխանատվությունը ներկա պատմական պահին կարող է միայն մեկ դրսեւորում ունենալ՝ խաղաղություն, որը նշանակում է հարաբերությունների կարգավորում բոլոր չորս հարեւանների հետ»,- ասել է վարչապետը: Նա նշել է, որ Իրանի եւ Վրաստանի հետ կա միայն հարաբերությունները խորացնելու անհրաժեշտություն: Սակայն գլխավոր հարցը, նրա խոսքով, այլ է. որքանո՞վ է դա իրատեսական եւ իրականանալի: «Այս հարցը երկու կողմ ունի: Նախ՝ խաղաղությունը չի կառուցվում միանձնյա: Կարեւոր է, թե որքանով Ադրբեջանի գործողությունները եւ քաղաքականությունն ուղղված կլինեն խաղաղությանը: Երկրորդ՝ հատկապես 44-օրյա պատերազմից հետո, եթե փոխզիջումներ ձեռք բերվեն, կարեւոր է հասկանալ, թե որքանով դրանք ընդունելի կլինեն Հայաստանի քաղաքացիների համար, եւ որքանով նրանք թույլ կտան այդ փոխզիջումների ցավոտ իրականացումը»,- ասել է Փաշինյանը:

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿՈՊԻՏ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Շիրակի մարզում շարունակվում է կալանավորների հիմնարար իրավունքների կոպիտ խախտումների դեպքերը:

Մասնավորապես՝ բացի այն, որ մի քանի ամիսը մեկ Շիրակի մարզի դատավորները տեղափոխվում են այլ դատարաններ, եւ գործերը կրկին սկսվում են քննվել սկզբից, գործում է նաեւ դատական նիստերը հետաձգելու այլ «սկզբունք», մասնավորապես՝ գործը ուղարկվում է դատարան, որոշվում է անձի խափանման միջոցի հարցը, եւ եթե դատարանը կալանավորումը թողնում է անփոփոխ, ապա հետագայում դատական նիստեր ուղղակի չեն կայանում:

Այսինքն՝ մի շարք գործերով նշանակված դատական նիստերը անընդհատ հետաձգվում են կամ ուղեկցող խմբի անգործության հետեւանքով, կամ դատարանը պատճառաբանում է, որ ծանրաբեռնված է:

Կան գործեր, որոնցից մեկով 2022 թվականի հունիսից մինչ օրս որեւէ դատական նիստ տեղի չի ունեցել, քանի որ կամ՝ ուղեկցող խումբը չի ներկայացրել կալանավորին դատարան, կամ՝ դատավորի ծանրաբեռնվածության պատճառով նիստը չի գումարվել:

Մեկ այլ գործով էլ անձը շուրջ երեք տարի գտնվում է անազատության մեջ, այդ ընթացքում գործը անցել է մի քանի դատավորների վարույթներով, սակայն դատական նիստերը կրկին հետաձգվում են վերը նշված նույն պատճառներով, իսկ մարդը շարունակում է անորոշ մնալ կալանքի տակ:

Սույն եւ այլ գործերով եւս արդեն իսկ առկա են Կոնվենցիայի դրույթների կոպտագույն խախտումներ, քանի որ որեւէ խոսք չի կարող գնալ արդար դատաքննության մասին այն պարագայում, երբ ամիսներ շարունակ դատական նիստեր տեղի չեն ունենում: Բացի վերը հիշատակված խնդիրներից, կալանավորներից որոշները ունեն առողջական լուրջ խնդիրներ, այդ թվում՝ հաշմանդամության կարգ: Արձանագրվել են նաեւ դեպքեր, երբ անձը կամավոր մասնակցել է 44-օրյա պատերազմին, սակայն ներկա պահին ամիսներ շարունակ կալանավայրում սպասում է, թե երբ պետք է ի վերջո դատական նիստ տեղի ունենա:

Այսինքն՝ կալանավորումը խափանման միջոց չէ, այլ կրում է պատժի տարրեր:

Վերը նշված խնդիրներով պայմանավորված՝ մի շարք կալանավորներ պատրաստվում են հացադուլ իրականացնել առաջիկայում:

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ՍՈԹՔԻ ՀԱՆՔՈՒՄ

Ապրիլի 18-ի դրությամբ՝ վաղ առավոտից, հակառակորդը կրակում է Սոթքի հանքավայրի աշխատակիցների ուղղությամբ՝ թիրախավորելով խաղաղ բնակիչներին. այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասաց Գեղամասար խոշորացված համայնքի նախկին ղեկավար Հակոբ Ավետյանը:

Նրա հաղորդմամբ՝ այս պահին հանքավայրի աշխատանքը շարունակվում է դադարեցած մնալ, աշխատակիցները տարհանված են. «Հենց հանքում սկսում է տեխնիկա շարժվել, թշնամին կրակում է՝ թույլ չտալով, որ հանքն աշխատի»:

Հիշեցնենք, որ ապրիլի 16-ին՝ ժամը 22:50-ի սահմաններում, Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները տարբեր տրամաչափի հրաձգային զենքերից կրակ են բացել Սոթքի ուղղությամբ տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍՏԻ ԴԵՏԵԿՏՈՐ

ՀՀ կառավարության ծրագրի 2022 թվականի կատարման ընթացքի ու արդյունքների մասին զեկույցից ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ արդարադատության նախարարության «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը ձեռք է բերել ժամանակակից ստի դետեկտոր (պոլիգրաֆ):

Թե ինչու է կառավարությանը անհրաժեշտ ստի դետեկտոր, թերեւս դժվար չէ կռահել, բայց փաստենք, որ ՀՀ կառավարությունն իսկապես ունի ստի դետեկտորի կարիք, որպեսզի պարբերաբար ստուգի իր իսկ ներկայացուցիչների նախկին հայտարարությունները: Վստահաբար սարքը շուտ կփչանա, քանի որ ստերի շարքը շատ երկար է ձգվում:

«Ժողովուրդ» օրաթերթը պարբերաբար հրապարակում է «Նիկոլ Փաշինյանը խաբել է» շարքը, որի հոդվածների քանակը հասել է 180-ի:

ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵԼ Է

4,7 մլրդ դրամ (մոտ 12 մլն դոլար-խմբ.) է հատկացվել բազմաբնակարան տներում 473 վերելակներ փոխելու համար: Այս որոշումն ապրիլի 18-ին ընդունվել է Երեւանի ավագանու նիստում:

Ընդհանուր առմամբ, կառավարությունը Երեւանի քաղաքապետարանին հատկացրել է ավելի քան 10 մլրդ դրամ կապիտալ ծախսերի, այդ թվում՝ մետրոպոլիտենի օդափոխման համակարգը փոխելու համար: Այդ միջոցներով նախատեսվում է նաեւ ապահովել Նոր Խարբերդ թաղամասի 250 տների գազամատակարարումը, պուրակների հիմնումն ու բարեկարգումը, մանկապարտեզների նորոգումն ու բարեկարգումը, ճանապարհների կառուցումն ու նորոգումը եւ այլն: Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանը հավաստիացրել է, որ մինչեւ 2025թ. քաղաքում չնորոգված մանկապարտեզ չի մնա: Նա ավելացրել է, որ այս ոլորտում նման ծավալի աշխատանքներ չեն իրականացվել խորհրդային ժամանակներից:

ԱՌԵՐԵՍՎԵՆՔ

ԻՆՉՊԵ՞Ս Է ՊԱՏԿԵՐԱՑՆՈՒՄ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

«Հայաստանի կառավարությունը կանի հնարավորն Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագիրը շուտ կնքելու համար, բայց դա հնարավոր կլինի, միայն եթե երկու երկրները ճանաչեն միմյանց տարածքային ամբողջականությունը»,- երեկ՝ կառավարության նախորդ տարվա ծրագրի կատարման զեկույցը ներկայացնելիս, հայտարարեց վարչապետ Փաշինյանը:

«Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագիրն իրատեսական կդառնա, եթե երկու երկրները հստակ, առանց երկիմաստությունների եւ որոգայթների միմյանց տարածքային ամբողջականությունը ճանաչեն եւ պարտավորվեն այսօր եւ երբեւէ միմյանց տարածքային պահանջներ չներկայացնել: Ես հիմա ուզում եմ վերահաստատել, որ Հայաստանի Հանրապետությունը լիարժեք ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, եւ ակնկալում ենք, որ Ադրբեջանը նույնը կանի՝ Հայկական ԽՍՀ ամբողջ տարածքը ճանաչելով որպես Հայաստանի Հանրապետություն», - ասաց նա:

Փաշինյանը հայտարարեց՝ միեւնույն ժամանակ հնարավոր պայմանագրի իրագործման երաշխավորման համար անհրաժեշտ է, որ ձեւավորվեն միջազգային մեխանիզմներ. «Հակառակ դեպքում պայմանագրի ստորագրման հաջորդ օրը կարող է պատերազմ բռնկվել կամ նոր էսկալացիա տեղի ունենալ: Կարեւոր է նաեւ կողմերի միջեւ ծագած վեճերի լուծման մեխանիզմների գոյությունը, որ եթե կողմերը ի վիճակի չլինեն ծագած խնդիրները՝ պայմանագրի տեքստի մեկնաբանությունների հետ կապված, ուղիղ բանակցություններով լուծել, լինի ատյան, որը դա կանի, եւ որի որոշումը պարտադիր լինի կողմերի համար»:

Ի՞նչ սահմաններով Հայաստանն ու Ադրբեջանը պետք է ճանաչեն միմյանց տարածքային ամբողջականությունը. Փաշինյանը խոսեց հայկական եւ ադրբեջանական ԽՍՀ-ների սահմանների մասին, սակայն առանց հստակեցնելու, թե բանակցությունների ընթացքում որ թվականի սահմաններն են հիմք ընդունվում:

«Մենք ինքներս ենք առաջարկել, որ պայմանագրին կցվեն Հայկական եւ Ադրբեջանական ԽՍՀ-ների՝ ԽՍՀՄ կողմից հաստատված քարտեզները՝ որպես երկու երկրների տարածքային ամբողջականության հիմք: Բայց այստեղ է, որ հասնում ենք ամենամեծ ու ամենաբարդ խնդրին՝ Լեռնային Ղարաբաղին», - շեշտեց նա:

Ինչպե՞ս է կառավարության ղեկավարը պատկերացնում Լեռնային Ղարաբաղի հարցի լուծումը. այս հարցին վարչապետը հստակ պատասխան չտվեց, սակայն խոսեց ինքնորոշման իրավունքի սկզբունքի մասին՝ դարձյալ ակնարկելով, որ այն իրականում Ղարաբաղի անկախության համար հիմքեր չի ստեղծել. «Եվ այս համատեքստում, իհարկե, չափազանց կարեւոր է, որ Բաքվի ու Ստեփանակերտի միջեւ բանակցությունների, երկխոսության միջազգային մեխանիզմ ձեւավորվի, եւ այդ մեխանիզմն ապահովի Լեռնային Ղարաբաղի հայության իրավունքների եւ անվտանգության ապահովման օրակարգի իրացումը»:

Ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանը պնդեց՝ ինքնորոշման իրավունքի սկզբունքի ու Արցախի հարցում Փաշինյանի այսօրվա դիրքորոշումը արտահայտված չէ 2021 թվականի նախընտրական ծրագրում:

«2018 թվականից սկսած՝ Դուք ասում էիք, որ այդ որոշումը, լուծումը պետք է ընդունելի լինի Հայաստանի, Ադրբեջանի եւ Ղարաբաղի ժողովուրդների համար: Խնդրեմ նշեք, կրկնում եմ, առանց երկիմաստությունների որոգայթի, թե որն է Ձեր պատկերացմամբ Ղարաբաղի ապագա կարգավիճակը», - շեշտեց պատգամավորը:

«Բանակցային բովանդակությունն ու հանրային խոսույթը պետք է համընկնեն իրար՝ մի բան, որ տասնամյակից ավելի այդպես չի եղել,- պնդեց Փաշինյանը:- Նաեւ իմ սխալն է. ես եկել եմ 2018 թվին, ես էլ չեմ արել դա, ես էլ եմ սխալ արել, բայց այդպես է: Ես այսօր ի՞նչ եմ ասում. ասում եմ՝ եկեք որոշենք՝ կա՛մ առերեսվում ենք, եւ ասում եմ՝ եթե մենք այս իրողության հետ չառերեսվենք, չի ստացվելու»:

ԼՈՒՐԵՐ

ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՏԵՂԱԿԱԼ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը որոշում է ստորագրել՝ նշանակում կատարելու մասին:

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով՝ Աշխեն Շիրվանյանին նշանակել էկոնոմիկայի նախարարի տեղակալ»,-նշվում է որոշման մեջ:

ՌԴ–Ն ՏԵՂՅԱԿ ՉԷ

Կրեմլի տրամադրության տակ չկա տեղեկություն Չինաստանի հետ միասին Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի՝ Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ բանակցությունների վերաբերյալ. այս մասին երեքշաբթի լրագրողներին ասել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը:

«Մեզ հայտնի չէ ինչ-որ ֆրանսիական պլանի գոյության մասին, եւ, հետեւաբար, մենք ֆրանսիական կողմից ոչինչ չենք ստացել»,- ասել է Կրեմլի ներկայացուցիչը:

«Այնտեղ, իսկապես, ինչ-որ տեղեկություններ եղել են այն մասին, որ, իբր, Չինաստան այցի ժամանակ ֆրանսիական կողմն ինչ-որ տարրեր է հնչեցրել, բայց մինչ այժմ դրանք՝ այդ տարրերը, ոչ մի տեղ չեն դրսեւորվել»,- ավելացրել է Պեսկովը:

Ավելի վաղ Le Monde թերթը տեղեկացրել էր, որ Մակրոնի այցը Չինաստան չի հանգեցրել Պեկինի դիրքորոշման փոփոխության ուկրաինական հակամարտության եւ Ռուսաստանի հարցում: Մակրոնը Չինաստան կատարած պետական այցի ժամանակ նաեւ Չինաստանի նախագահ Սի Ծինփինին ասել էր, որ ուկրաինական հակամարտության կարգավորման գործում Պեկինի միջնորդության հույս ունի:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑ

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանն ապրիլի 18-20-ը պաշտոնական այցով կմեկնի Լիտվայի Հանրապետություն:

Այցի շրջանակներում նախագահը հանդիպումներ կունենա Լիտվայի նախագահի եւ բարձրաստիճան ղեկավարության հետ, կմասնակցի հայ-լիտվական գործարար համաժողովի բացմանը:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ Է ՀԱՅՏՆՈՒՄ

ՀՀ նախկին վարչապետ Հ.Ա.-ն, 2006 թվականից մինչեւ 2016 թվականի սեպտեմբերի 8-ն ընկած ժամանակահատվածում հանդիսանալով հանրային պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձ, անցել է պաշտոնեական լիազորություններ, ինչպես նաեւ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու արգելքին հակառակ, վստահված անձանց միջոցով մասնակցել է ավազի արդյունահանմամբ զբաղվող «Ավազահատիկ» ՍՊ ընկերության կառավարմանը՝ օրինականացնելով դրա արդյունքում հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով գույքերը:

Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթով հիմնավորվել է, որ Հ.Ա.-ն, 1995-2016 թվականների ընթացքում զբաղեցնելով տարբեր պաշտոններ (ՀՀ ազգային ժողովի առաջին գումարման պատգամավոր, Արտաշատի քաղխորհրդի գործկոմի նախագահ, Արտաշատի քաղաքապետ, Արարատի մարզպետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար, ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար, ՀՀ չորրորդ գումարման ազգային ժողովի պատգամավոր, ՀՀ ազգային ժողովի նախագահ, ՀՀ վարչապետ), ավազի արդյունահանում իրականացնող «Ավազահատիկ» ՍՊ ընկերության 60 տոկոսի բաժնետեր Գ.Գ.-ի բաժնեմասին ապօրինի տիրանալու եւ վստահված անձանց միջոցով ընկերության կառավարմանը մասնակցելու դիտավորությամբ 2006 թվականի վերջից մինչեւ 2008 թվականի ամառն ընկած ժամանակահատվածում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների միջոցով խոչընդոտներ է ստեղծել «Ավազահատիկ» ՍՊ ընկերության կողմից Արարատի մարզի Նորամարգ համայնքից վարձակալած 5 հա հողատարածքից օրենքով սահմանված կարգով իրականացվող ավազի արդյունահանումը իրականացնելու համար, ինչպես նաեւ միջոցներ է ձեռնարկել արդյունահանումը դադարեցնելու ուղղությամբ:

Այդ ընթացքում Հ.Ա.-ի եւ այլ պաշտոնատար անձանց բանավոր ցուցումով Հ.Ա.-ի եղբայրը՝ Հե.Ա.-ն, հանձնարարել է Արարատի մարզի Նորամարգ համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած Ս.Գ.-ին լուծել համայնքի ու «Ավազահատիկ» ՍՊ ընկերության միջեւ կնքված պայմանագիրը՝ «Ավազահատիկ» ՍՊ ընկերությանը վարձակալությամբ տրամադրված հողատարածքը ոչ նպատակային շահագործելու պատճառաբանությամբ: Համայնքի ղեկավար Ս.Գ.-ն, մտավախություն ունենալով, որ նշված պահանջը չկատարելու դեպքում իր համար կարող են առաջանալ անբարենպաստ հետեւանքներ, ընդհուպ՝ զբաղեցրած պաշտոնից ազատում, 2007 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 81 որոշմամբ միակողմանի լուծել է «Ավազահատիկ» ՍՊ ընկերության հետ կնքված վարձակալության պայմանագիրը եւ մինչեւ հողի նպատակային նշանակության փոփոխումը արգելել է ավազի հանույթը:

2008 թվականի հունիս 11-ին, 24-ին, հուլիսի 2-ին, 7-ին ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած Հ.Ա.-ն, «Ավազահատիկ» ՍՊ ընկերության 60 տոկոսի բաժնետեր Գ.Գ.-ի ընկերոջ՝ Կ.Կ.-ի միջնորդությամբ իր աշխատավայրում տեղի ունեցած հանդիպման ժամանակ Գ.Գ.-ին ներկայացրել է ապօրինի պահանջ, այն է՝ «Ավազահատիկ» ՍՊ ընկերության 60 տոկոս բաժնեմասը իր եղբոր՝ Հե.Ա.-ի եւ տվյալ պահին ՀՀ ոստիկանության պետի պաշտոնը զբաղեցնող Ա.Ս.-ի ներկայացուցչի անվամբ համամասնորեն գրանցելու վերաբերյալ: Գ.Գ.-ն, այլ ելք չունենալով, ընկերության հետագա գործունեությունը շարունակելու նպատակով ստիպված ընդունել է այդ պահին ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի պաշտոնը զբաղեցնող Հ.Ա.-ի առաջարկը եւ իրեն պատկանող բաժնեմասի 30 տոկոսը վաճառել է վերջինիս եղբորը՝ Հե.Ա.-ին, իսկ մյուս 30 տոկոսը՝ ոստիկանության պետ Ա.Ս.-ի եղբոր՝ Ք.Ս.-ի աներորդուն՝ Խ.Ա.-ին:

Այնուհետեւ Հ.Ա.-ի եղբայր Հե.Ա.-ն Նորամարգի գյուղապետարանում հանդիպել է համայնքի ղեկավար Ս.Գ.-ին եւ վերջինիս հետ ձեռք բերել պայմանավորվածություն՝ 5 հա հողատարածքը վարձակալությամբ կրկին «Ավազահատիկ» ՍՊ ընկերությանը տալու ձեւական մրցույթ կազմակերպելու շուրջ: 2008 թվականի հուլիսի 22-ին կայացած ձեւական մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել «Ավազահատիկ» ՍՊ ընկերությունը: Դրանից հետո կնքվել է պայմանագիր, որով նշված հողատարածքն ավազի արդյունահանման նպատակով 25 տարի ժամկետով 90 հազար դրամ տարեկան վարձավճարով կրկին վարձակալության է տրամադրվել «Ավազահատիկ» ՍՊԸ-ին՝ այդպիսով փաստացի հնարավորություն տալով նշված ընկերությանը իրականացնել ավազի հանույթ:

Վերոնշյալ եղանակով արտոնություններ եւ առավելություններ են տրամադրվել «Ավազահատիկ» ՍՊ ընկերությանը, որից հետո ընկերությունը շարունակել է ավազի արդյունահանումը՝ եկամուտներ ապահովելով դրա 60 տոկոս բաժնեմասին փաստացի տիրապետող Հ.Ա.-ի համար:

2008-2015 թվականների ընթացքում Հ.Ա.-ն, վստահված անձանց միջոցով ապօրինի մասնակցելով «Ավազահատիկ» ՍՊ ընկերության գործունեությանը, ավազի հանքի շահագործումից ստացել է շուրջ 230 մլն 400 հազար դրամի շահույթ:

Ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու արդյունքում ձեռք բերված վերոնշյալ դրամական միջոցներն օրինականացնելու դիտավորությամբ, դրանց հանցավոր ծագումը խեղաթյուրելու, իրական պատկանելիությունը թաքցնելու նպատակով Հ.Ա.-ն վերոնշյալ գումարը միախառնել է իր այլ եկամուտների հետ, ապա տարատեսակ քաղաքացիաիրավական գործարքների, այդ թվում՝ տարբեր գույքեր ձեռք բերելու, բանկային գործարքներ կատարելու եղանակներով դրանց հաղորդել է օրինական տեսք:

Մասնավորապես՝ Հ.Ա.-ն ինչպես 2008-2015 թվականների ընթացքում, այնպես էլ դրանից հետո՝ ներառյալ 2018 թվականը, ձեռք է բերել եւ իր ու իր հետ փոխկապակցված անձանց անուններով հաշվառել է մեկ տասնյակից ավելի տարբեր արժողության գույքեր:

Վերոնշյալ գործողությունների հետեւանքով թաքցվել է գույքերի իրական պատկանելիությունը, խեղաթյուրվել է դրանց հանցավոր ծագումը, ինչի արդյունքում օրինականացվել է հանցավոր ճանապարհով ստացված նշված առանձնապես խոշոր չափերի՝ 230 մլն 400 հազար դրամը:

Հսկող դատախազը սեփական նախաձեռնությամբ 2023 թվականի ապրիլի 17-ին որոշում է կայացրել Հ.Ա.-ի նկատմամբ 18.03.2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով գույքն օրինականացնելը (փողերի լվացումը)), 309-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական լիազորություններն անցնելը) եւ 310-րդ հոդվածով (ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը) հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին:

Որոշումը նույն օրն ուղարկվել է վարույթն իրականացնող քննիչին՝ Հ.Ա.-ին մեղադրանք ներկայացնելու համար:

ՊԱՆՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՏՈՒԳԱՆՎԵԼ ԵՆ 13 ՄԼՆ ԴՐԱՄՈՎ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը հասարակության մոլորեցման դրսեւորումներով անբարեխիղճ մրցակցության համար պատասխանատվության միջոցներ է կիրառել կաթնամթերք արտադրող «Ամասիայի գլխավորող պանրագործարան» ՍՊԸ-ի, «Ադարանի պանրի գործարան» ՓԲԸ-ի եւ «Մեր երկիր» ՍՊԸ-ի նկատմամբ:

Այս մասին հաղորդագրություն է տարածել ՄՊՀ-ն: Վարույթների քննության արդյունքում հանձնաժողովն արձանագրել է, որ «Ամասիայի գլխավորող պանրագործարան» ՍՊԸ-ի կողմից արտադրվել եւ իրացվել է բուսական յուղի առկայությամբ պանիր, իսկ «Ապարանի պանրի գործարան» ՓԲԸ-ի եւ «Մեր երկիր» ՍՊԸ-ի կողմից արտադրված մածունների, ինչպես նաեւ «Մեր երկիր» ՍՊԸ-ի կողմից արտադրված կաթի փաթեթվածքների վրա մակնշվել է իրականությանը չհամապատասխանող յուղայնության չափի վերաբերյալ տեղեկատվություն:

Արդյունքում հանձնաժողովը, ս.թ. ապրիլի 11-ի թիվ 167-Ա որոշմամբ, «Ամասիայի գլխավորող պանրագործարան» ՍՊԸ-ի նկատմամբ նշանակել է 9 146 440 ՀՀ դրամի, թիվ 165-Ա եւ թիվ 166-Ա որոշումներով՝ «Մեր երկիր» ՍՊԸ-ի նկատմամբ՝ ընդհանուր 2 990 578 Հայաստանի Հանրապետության դրամի, եւ թիվ 164-Ա որոշմամբ՝ «Ապարանի պանրի գործարան» ՓԲԸ-ի նկատմամբ՝ 600 947 ՀՀ դրամի չափով տուգանքներ:

ԼՈՒՐԵՐ

ՍՊԱՆ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

Փաստեր են ձեռք բերվել այն մասին, որ պաշտպանության բանակի N զորամասի հրամանատարի տեղակալ գնդապետը ռազմական դրության պայմաններում՝ 2020 թ. հոկտեմբերի 10-ից նոյեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում, հիվանդության սիմուլյացիա է դրսեւորել:

Ստացիոնար բուժում չպահանջող առողջական խնդրի պայմաններում նա 23 օր ստացիոնար բուժում է ստացել բժշկական հաստատությունում, որը հանգեցրել է վերջինիս կողմից զինվորական ծառայության առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն:

Ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա՝ բարձրաստիճան սպայի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու միջնորդություն է ներկայացվել հսկող դատախազին, ում կողմից միջնորդությունը բավարարվել է: Նրան մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 5-րդ մասով (համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 527-րդ հոդվածի 3-րդ մասին):

Միջնորդություն է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ երկամսյա ժամկետով կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, որը դատարանի կողմից բավարարվել է:

Նախաքննությունը շարունակվում է:

ՕՊԵՐԱՏԻՎ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ներկայացնում է 2023 թվականի ապրիլի 1-ից 15-ն ընկած ժամանակահատվածում ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչության իրականացրած հարկային իրավախախտումների կանխման, խափանման եւ բացահայտման ուղղությամբ համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները:

17 դեպքով արձանագրվել են առանց համապատասխան հաշվարկային փաստաթղթեր դուրս գրելու ընդհանուր 5,933,959 ՀՀ դրամի՝ ՀՀ հարկային օրենսգրքի պահանջների խախտումով ապրանքների տեղափոխման կամ մատակարարման դեպքեր: Հնարավոր տուգանքի գումարը կազմում է 8,169,900 ՀՀ դրամ:

3 դեպքով կազմվել են ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ արձանագրություններ: Ապօրինի ձեռնարկատիրական եկամտի չափը կազմել է 3,490,000 ՀՀ դրամ: Հնարավոր տուգանքի գումարը կազմում է 1,800,000 ՀՀ դրամ:

3 դեպքով արձանագրվել են լիցենզավորման կամ ծանուցման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի կամ առանց ծանուցման իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու խախտումներ: Արձանագրված խախտումների գումարը կազմում է 170,550,000 ՀՀ դրամ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 17-ից 18-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 49 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ՊԱԿԱՍ ԿԱ

Տավուշի մարզի առողջապահական հիմնարկներում բժիշկ-մասնագետների պակաս է զգացվում: Մարզում բժիշկներ կան, որոնք վաղուց կենսաթոշակային տարիքի են, սակայն փոխարինող բժիշկ չլինելու պատճառով շարունակում են աշխատել: 77 տարեկան Ժորժետա Մաճկալյանը Բերդի տարածաշրջանի միակ ակնաբույժն է, որը սպասարկում է չափահասներին եւ երեխաներին: Նա 1971 թվականին է ավարտել Երեւանի պետական բժշկական ինստիտուտը՝ թերապեւտի որակավորմամբ, սակայն Բերդի տարածաշրջանում ակնաբույժ չլինելու պատճառով եւս 3 տարի մասնագիտացել է ակնաբուժության մեջ: Ժ. Մաճկալյանի խոսքերով՝ բժշկական ինստիտուտ ավարտելուց հետո ինքը հնարավորություն է ունեցել մնալ, աշխատել Երեւանում, սակայն ընտրել է իր հայրենի տարածաշրջանը: Նա ասում է, որ հիմա երիտասարդ բժիշկները չեն ցանկանում հեռավոր մարզերում աշխատել, քանի որ այնտեղ բժշկական գործիքների պակաս կա, համապատասխան պայմաններ չկան: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել՝ հարցնելով, թե մարզպետարանի ենթակայության տակ գործող առողջապահական հիմնարկներում քանի կենսաթոշակառու բժիշկ է աշխատում, այդ բժշկական հիմնարկությունները ինչ կադրերի պակաս ունեն: Մարզպետարանից ստացված գրավոր պատասխանում նշված է, որ Տավուշի մարզպետարանի ենթակայությամբ գործում է 21 բժշկական հաստատություն, դրանց աշխատակիցների ընդհանուր թիվը 638 է, որից կենսաթոշակի տարիքի են 96-ը: Մարզի բուժհաստատություններում կադրային պահանջարկն այսպիսին է՝ «Իջեւանի ԲԿ» - մանկական անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ-1, շտապ օգնության բժիշկ-4, քիթ-կոկորդ-ականջաբան-1, «Իջեւանի ԱԱՊԿ»-ընտանեկան բժիշկ-2, «Արծվաբերդի ԱԿ» ՊՈԱԿ-մանկաբույժ-1, «Մովսեսի ԱԱՊԿ» ՊՈԱԿ--մանկաբույժ-1, «Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ- թերապեւտ-1, հեմոդիալիզի բժիշկ-1, նյարդաբան-1, սրտաբան-1,մանկաբույժ-1, վիրաբույժ-1, շտապ օգնության բժիշկ-1, «Բագրատաշենի ԳԲԱ» ՊՈԱԿ-ընտանեկան բժիշկ-1, ինչպես նաեւ 4 ընտանեկան բժիշկ-տնօրեն՝ Ներքին Կարմիրաղբյուրի, Արծվաբերդի, Խաշթառակի, Ազատամուտի ԱԱՊԿ-ներում:

ԻՆՉՔԱ՞Ն ԳՈՒՄԱՐ ԿԾԱԽՍՎԻ

Տավուշի մարզպետարանի շուրջ յոթ տասնյակ աշխատակիցներից միայն մեկը՝ Մարինե Խաչատրյանն է մշակույթի ոլորտում աշխատում: Նա չունի մշակութային կրթություն, այլ բուհ է ավարտել, մշակույթի որեւէ բնագավառում ստեղծագործող չէ: Մարզպետարանը մշակութային միջոցառումներ կազմակերպելու առումով ակտիվ չէ: Ի պատասխան «Ժողովուրդ» օրաթերթի հարցմանը՝ Տավուշի մարզպետարանից հայտնել են, որ 2023 թվականի ՀՀ պետական բյուջեում նախատեսված 2 միլիոն 572 հազար դրամ ընդհանուր գումարով Տավուշի մարզում կիրականացվի մշակութային 4 միջոցառում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՈՒՄ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Բացահայտվել է երեւանաբնակ ամուսինների կողմից կատարված թմրամիջոցների ապօրինի շրջանառության, ինչպես նաեւ հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով գույքի օրինականացման դեմ: Նախաքննությունն ավարտվել է:



ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդկանց թրաֆիքինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչության քննիչների կողմից իրականացված քննչական եւ վարութային մեծածավալ գործողությունների արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորվել է, որ Երեւան քաղաքի 26-ամյա բնակիչը 2019թ. նոյեմբերից համացանցի «Telegram» հեռահաղորդակցման հավելվածում ստեղծել եւ կառավարել է «Shoko.178», «Shoko 178» եւ գրեթե նույնանուն այլ առցանց խանութ-հարթակներ: Դրանց միջոցով վաճառվող թմրամիջոցների համար, որպես գումարի ստացման վճարային գործիք, նա տեղադրել է այլ անձանց անուններով գրանցված, սակայն իր կողմից կառավարվող էլեկտրոնային դրամապանակների վերաբերյալ տեղեկատվություն եւ 2019-2021թթ. ընթացքում նշված խանութ-հարթակների միջոցով տարբեր անձանց ապօրինի իրացրել է առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց:

Մասնավորապես, 26-ամյա երիտասարդի կողմից կառավարվող տելեգրամյան վերոնշյալ խանութ-հարթակների միջոցով թմրամիջոց ձեռք բերելու շուրջ նամակագրություններ վարած անձանց հետ համաձայնության գալուց հետո՝ երիտասարդի հաշվին գումարի մուտքագրման փաստը հաստատող անդորրագրի լուսանկարները գնորդների կողմից փոխանցելուց հետո, նրանց է ուղարկվել Երեւան քաղաքում գտնվող թաքստոցներում նախապես տեղադրված, ըստ քաշերի առանձնացված եւ փաթեթավորված թմրամիջոցների տեղակայման լուսանկարները՝ ճշգրիտ աշխարհագրական կոորդինատներով: Նշված եղանակով երիտասարդի կողմից առանձնապես խոշոր չափերով՝ առնվազն 162 գրամ «MDMB-2201 (5F-MDMB-PICA)» տեսակի թմրամիջոց է ապօրինի իրացվել բազմաթիվ անձանց:

Ձեռք բերված տվյալների համաձայն՝ թմրամիջոցների իրացումից ստացված ընդհանուր 53.479.443 ՀՀ դրամի հանցավոր ծագումը, դրանց իրական բնույթը թաքցնելու, տեղաշարժն ու տեղաբաշխումը քողարկելու, դրանց օրինական տեսք հաղորդելու նպատակով 26-ամյա երիտասարդը, իր 24-ամյա կնոջ օժանդակությամբ, նշված գումարները փոխանցել է տարբեր անձանց անուններով գրանցված, սակայն իր եւ կնոջ կողմից փաստացի կառավարվող ինչպես օտարերկրյա, այնպես էլ ՀՀ-ում գրանցված տարատեսակ էլեկտրոնային դրամապանակներին: Ապա նույն եղանակով դրանք փոխանցվել են ամուսինների էլեկտրոնային դրամապանակներին, կանխիկացվել կամ այլ կերպ տնօրինվել նրանց կողմից:

Ձեռք բերված բավարար փաստերի համակցությամբ երիտասարդին մեղադրանք է ներկայացվել՝ իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառության, առանձնապես խոշոր չափերով փողերի լվացման համար: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Վերջինիս կնոջը մեղադրանք է ներկայացվել առանձնապես խոշոր չափերով փողերի լվացմանն օժանդակելու համար:

Ամուսինների մասով նախաքննությունն ավարտվել է, եւ քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

ԼՈՒՐԵՐ

ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԿԿԱՐԳԱՎՈՐՎԻ

Հայաստանից Ռուսաստան կաթնամթերքի մատակարարումը դադարեցնելուց հետո սկսված բանակցությունները՝ ուղղված սահմանափակման վերացմանը, ապրիլի 17-ին շարունակվել են Մոսկվայում:

ՌԴ Ռոսսելխոզնադզորի ղեկավար Սերգեյ Դանկվերտը եւ ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Արմեն Հայրապետյանը քննարկել են կողմերին հուզող խնդիրները՝ կապված Ռուսաստանում շրջանառության թույլտվություն չունեցող իրանական հումքից պատրաստված կաթնամթերքի արտահանման հետ:

Կողմերը երկուստեք դրսեւորել են կառուցողական մոտեցում եւ պայմանավորվել խնդիրը կարգավորել փուլ առ փուլ:

Ըստ այդմ՝ Հայաստանի կաթնամթերք արտադրող ու արտահանող կազմակերպություններին, որոնք աշխատում են միայն տեղական եւ ՌԴ-ում թույլատրված հումքով, առաջարկում ենք դիմել Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին՝ իրենց ընկերություններում ուսումնասիրություններ եւ վերահսկողություն իրականացնելու համար: Այն կազմակերպությունները, որոնք կբավարարեն սահմանված պահանջները, կներկայացվեն Ռոսսելխոզնադզորի դիտարկմանը:

Այս գործընթացը հնարավորություն կտա որոշակի ժամանակահատվածում ամբողջությամբ վերականգնել դեպի ռուսական շուկա հայկական կաթնամթերքի արտահանման նախկին ծավալները:

ՃԱՆԱՉՎԵԼ Է ՀԱԿԱՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

Պաշտպանի դիմումի հիման վրա՝ սույն թվականի ապրիլի 11-ին Սահմանադրական դատարանը հակասահմանադրական է ճանաչել զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաեւ դատավորների եւ Սահմանադրական դատարանի դատավորների համար սահմանված՝ արհեստակցական կազմակերպության մասնակից լինելու բացարձակ արգելքը:

ՄԻՊ-ից հայտնում են, որ Սահմանադրական դատարանը Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանել 2023 թվականի նոյեմբերի 11-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին մի շարք օրենքների իրավակարգավորումները համապատասխանեցնելու ՍԴ որոշմանը:

Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանը նաեւ Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել ազգային անվտանգության մարմինների ծառայողի՝ կրոնական կազմակերպության անդամ լինելու եւ զինծառայողի՝ կրոնական միավորումներ ստեղծելու արգելք սահմանող դրույթները:

Հիշեցնենք, որ 2022 թվականի օգոստոսի 23-ին Պաշտպանը դիմում էր ներկայացրել Սահմանադրական դատարան՝ վիճարկելով «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 41-րդ, 45-րդ, 78-րդ, 79-րդ հոդվածներին: Պաշտպանը վիճարկել էր սահմանված արգելքների համապատասխանությունը կրոնի ազատության, միավորումների ազատության իրավունքներին, համաչափության եւ որոշակիության սկզբունքներին:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 15 ՃՏՊ. 21 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

Աճուրդ-վաճառք՝ «Մուռմել-Արմանի»

«Մուռմել-Արմանի» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 25.05.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/0719/04/20 սնանկության գործով 04.09.2020 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «Մուռմել-Արմանի» ՍՊԸ ստորեւ նշված շարժական գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 2 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18-430 տիպարի, 2004թ. արտադրության, 632 US 65 պետհամարանիշով, նարնջագույն, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝ բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝ WMAH13ZZ15M400073, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 7,020,000 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «LECITRAILER» մակնիշի, D 2440 տիպարի, 2000թ. արտադրության, 228 L 01 պետհամարանիշով, գույնը՝ սպիտակ, թափքի տեսակը՝ սառնարան, ՏՄ տեսակը՝ կիսակցորդը (նույնացման համար՝ VV1F3FA1XSN097823, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 8,010,000 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18.430 տիպարի, 2006թ. արտադրության, 090 PP 96 պետհամարանիշով, գույնը՝ դեղին, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝ բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝ WMAH13ZZ97M464106, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 8,100,000 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18-430 տիպարի, 2005թ. արտադրության, 756 US 65 պետհամարանիշով, գույնը՝կարմիր, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝ բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝ WMAH06ZZ85M423273, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 7,650,000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները:

Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «Մուռմել-Արմանի» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480103421570000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 044200454, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

ՕԼԻՄՊԻԱԴԱ

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ ԿՏՏԱՆԱՆ

2023 թվականին 15 առարկաներից՝ «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա», «Աստղագիտություն», «Կենսաբանություն», «Ինֆորմատիկա», «Աշխարհագրություն», «Պատմություն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն», «Հայոց լեզու», «Հայ գրականություն», «Ռուսաց լեզու» եւ «Հայոց եկեղեցու պատմություն», կազմակերպվել է դպրոցականների հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը:

Օլիմպիադայի եզրափակիչ փուլում 68 մասնակից արժանացել է առաջին, 137-ը՝ երկրորդ, իսկ 180-ը՝ երրորդ կարգի դիպլոմների: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով՝ հաստատվել է 2023 թվականին տեղի ունեցած դպրոցականների առարկայական հանրապետական օլիմպիադաների եզրափակիչ փուլերի հաղթած անվանական կրթաթոշակ ստացողների ցանկը: Նշենք, որ կրթաթոշակները տրամադրվում են՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 3-ի 605-Ա/2 հրամանով հաստատված «Հանրակրթական ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների սովորողներին անվանական կրթաթոշակի տրամադրման» կարգի: Ըստ այդմ՝ եթե սովորողը միաժամանակ երկու կամ երեք հիմքով է ընդգրկվում կրթաթոշակ ստացողների ցանկում, ապա նա կարող է ստանալ դրանց հանրագումարի չափով կրթաթոշակ: Անվանական կրթաթոշակը սովորողներին տրվում է հաստատությունների միջոցով՝ մեկ տարվա հաշվարկով, իսկ ուսումնառությունը տվյալ հաստատությունում դադարելու դեպքում մեկ տարվա համար նախատեսված կրթաթոշակի չվճարված մասը սովորողին վճարվում է միանվագ: Սովորողներին խրախուսելու նպատակով սահմանված անվանական կրթաթոշակի նոր կարգը գործում է 2020 թ. հունվարի 1-ից: Առարկայական օլիմպիադայի հաղթողների համար սահմանված են հետեւյալ կրթաթոշակները.

1. Միջազգային առարկայական օլիմպիադաների եզրափակիչ փուլերի մասնակիցներ՝
-առաջին կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 25.000 դրամ,
-երկրորդ կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 20.000 դրամ,
-երրորդ կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 15.000 դրամ,
-եզրափակիչ փուլերի այլ մասնակիցներին՝ ամսական 10.000 դրամ:

2. Միջազգային դպրոցական այլ օլիմպիադաների (Ժաուտիկովյան միջազգային օլիմպիադա, Մենդելեեւյան միջազգային օլիմպիադա եւ այլն) եզրափակիչ փուլերի մասնակիցներ՝
-առաջին կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 15.000 դրամ,
-երկրորդ կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 10.000 դրամ,
-երրորդ կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 7.500 դրամ:

3. ՀՀ առարկայական հանրապետական օլիմպիադաների եզրափակիչ փուլերի հաղթողներ (դիպլոմակիրներ)՝
-առաջին կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 10.000 դրամ,
-երկրորդ կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 7.500 դրամ,
-երրորդ կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 5.000 դրամ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

Հրապարակային սակարկություններով աճուրդ-վաճառք

«ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 10.05.2023 թվականին ժամը 15:00-ին ք.Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/0888/04/21 սնանկության գործով 24.05.2021 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի ստոր– նշված շարժական եւ անշարժ գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 1- Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍ-ՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վարսեր համայնքի տարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2480935:

Մեկնարկային գին՝ 2,479,491 ՀՀ դրամ:

Լոտ 2 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍ-ՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Սեւան, հյուսիս արեւմտյան մաս, «Իշխան» ռեստորանի հյուսիս արեւմուտք հողատարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2161076:

Մեկնարկային գին՝ 1,997,368 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍ-ՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Աղբերք համայնք, փող. 13, հողամաս 11 բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2626848:

Մեկնարկային գին՝ 860,935 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Անուշ Միլիտոսի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Շորժա համայնք բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2140468:

Մեկնարկային գին՝723,185 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Մյասնիկյան 3 նրբ., թիվ 24,26 հասցեում գտնվող տնամերձ հողամաս անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2290379:

Մեկնարկային գին՝1,054,644 ՀՀ դրամ:

Լոտ 7 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍ-ՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 57/21 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2430110:

Մեկնարկային գին՝3,185,457 ՀՀ դրամ:

Լոտ 9 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, – Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Արարատի Մարզ, Մասիս համայնքում գյուղնշանակության հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2183736:

Մեկնարկային գին՝959,943 ՀՀ դրամ:

Լոտ 10 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված «FORD» մակնիշի, TRANZIT 2.4 TD տիպարի, 2000թ. արտադրության, 104 PP 11 պետհամարանիշով, կարմիր գույնի, բեռնատար տեսակի ավտոմեքենան (նույնացման համար՝ WF0LXXGBFLYC10424, գտնվելու վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Վերին Գետաշեն, Բ թաղամաս, 2-րդ փողոց, 12):

Մեկնարկային գին՝1,061,101 ՀՀ դրամ:

Լոտ 11 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված «MITSUBISHI» մակնիշի, MONTERO SPORT 3.0 տիպարի, 2000թ. արտադրության, 104 LL 11 պետհամարանիշով, սեւ գույնի, ունիվերսալ տեսակի ավտոմեքենան (նույնացման համար՝ JA4LS21HXYP038422, գտնվելու վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Վերին Գետաշեն, Բ թաղամաս, 2-րդ փողոց, 12):

Մեկնարկային գին՝731,794 ՀՀ դրամ:

Լոտ 12 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված Sharp սառնարան (տեխնիկական վիճակը՝բավարար)

Մեկնարկային գին՝ 30,618 ՀՀ դրամ:

Լոտ 19 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված կաթսայատուն ընդհ. (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մեկնարկային գին՝ 229,635 ՀՀ դրամ:

Լոտ 20 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված լվացման հոսքագիծ (տեխնիկական վիճակը՝անսարք)

Մեկնարկային գին՝204,120 ՀՀ դրամ:

Լոտ 26 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված միրգ տրորող սարք (տեխնիկական վիճակը՝բավարար)

Մեկնարկային գին՝25,515 ՀՀ դրամ:

Լոտ 27 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված ջարդիչ (տեխնիկական վիճակը՝անսարք)

Մեկնարկային գին՝17,860 ՀՀ դրամ:

Լոտ 32 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված թրթուրավոր շղթա (տեխնիկական վիճակը՝բավարար)

Մեկնարկային գին՝61,236 ՀՀ դրամ:

Լոտ 35 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված հյութ լցնող սարք (տեխնիկական վիճակը՝բավարար)

Մեկնարկային գին՝76,545 ՀՀ դրամ:

Լոտ 36 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված լաբորատոր սարք (տեխնիկական վիճակը՝բավարար)

Մեկնարկային գին՝25,515 ՀՀ դրամ:

Լոտ 37 - Պարտապան «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված ավտոկլավ փոքր երկու հատ (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մեկնարկային գին՝66,339 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում են գրավի առարկաներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները:

Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «ԱՏԱՍՍ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480102725520000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 060 500 250, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

● *«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

«ՔՈ ԱՐՎԵՍՏԸ՝ ԴՊՐՈՑՈՒՄ»

ԿԳՄՄՆ-Ն ՆՈՐ ԾՐԱԳԻՐ Է ՄԵԿՆԱՐԿԵԼ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ՝ ապրիլի 17-ից մեկնարկում է «Քո արվեստը՝ դպրոցում. մասնագիտության որոնումներում» հանրապետական ծրագրի նոր փուլը: Ծրագրի մեկնարկի միջոցառմանը ներկա են եղել ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, նախարարի տեղակալներ Արա Խզմալյանը եւ Արմսիա Սվաջյանը: ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը ողջունել է մասնակից աշակերտներին՝ կարեւորելով ծրագրի իրականացումը. «Այս ծրագրի շնորհիվ՝ դուք հնարավորություն ունեք ծանոթանալու արվեստի բոլոր ճյուղերին:

Շփվելով եւ երկխոսություն ունենալով մեծ հաջողություններ գրանցած եւ փորձառություն ունեցող արվեստագետների հետ՝ դուք ձեռք եք բերելու ոչ միայն հիմնարար գիտելիք, այլեւ արժեքային դաստիարակություն, մասնագիտական կողմնորոշման լայն հնարավորություններ»: Նախարարը հաջողություն է մաղթել աշակերտներին եւ հույս հայտնել, որ ծրագրով, որը հնարավորություն է տալիս զարգացնելու տաղանդներն ու հմտությունները, կամրապնդվի ոլորտի նկատմամբ հետաքրքրությունը եւ շարունակություն կունենա ապագայում:

Ողջույնի խոսքով հանդես են եկել նաեւ նախարարի տեղակալներ Արաքսիա Սվաջյանը եւ Արա Խզմալյանը: Արաքսիա Սվաջյանի գնահատմամբ՝ ծրագիրն աշխարհայացքի ընդլայնման, արժեհամակարգի ձեւավորման խթան է, որը նպաստում է հայ եւ համաշխարհային մշակույթի նկատմամբ վերաբերմունք եւ մտածողություն ձեւավորելուն: «Արվեստին ծանոթանալու հնարավորությունն անձի զարգացման համար մեծ նշանակություն ունի: Վաղը դուք եք դառնալու արվեստի գլուխգործոցներ ստեղծողներից մեկը եւ այդպիսով մեր մշակույթը ներկայացնողն ու հանրահռչակողը»,- ընդգծել է Արաքսիա Սվաջյանը:

Ծրագրի առաջին շրջափուլը մեկնարկում է Երեւանից եւ կկայանա ապրիլի 17-ից մայիսի 5-ը Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի փոքր բեմում (Black box): Առաջին շրջափուլին կմասնակցի Երեւանի 100 հանրակրթական դպրոցի 900 աշակերտ: Առաջին հանդիպմանը տեղի կունենա դասախոսություն-հանդիպում ՀՀ ժողովրդական արտիստ Ռուբեն Մաթեւոսյանի հետ: Նախարարի տեղակալ Արա Խզմալյանը խորհրդանշական է համարել առաջին շրջափուլը Ժողովրդական արտիստ Ռուբեն Մաթեւոսյանի մասնակցությամբ մեկնարկելու հանգամանքը: «Առաջին մասնագիտությամբ լինելով բանասեր՝ Ռուբեն Մաթեւոսյան արվեստագետն այն լավագույն օրինակն է, որ երբեք ուշ չէ խիզախելու եւ նոր ճանապարհ սկսելու՝ նպաստելով տվյալ ոլորտի կայացմանն ու հաջողություններ գրանցելուն»,- ասել է Արա Խզմալյանը: Նախագծի շրջանակում իրականացվելու են Հայաստանի 50 մշակույթի գործչի, արվեստագետի կյանքի ու գործունեության ճանաչելիության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

Ծրագրին կմասնակցի ՀՀ մարզերի եւ Երեւանի շուրջ 3600 դպրոցական՝ 450 դպրոցից: Նախատեսվում է իրականացնել հանդիպումներ ինտերակտիվ ձեւաչափով. երեխաները հնարավորություն կունենան ստանալու ոչ միայն տեսական գիտելիքներ, այլեւ անմիջականորեն կդիտեն տվյալ արվեստագետի ներկայացումը, համերգային կատարումը, մասնակցություն կունենան հյուրի կողմից տեղում անցկացվող վարպետության դասին, արվեստի նմուշների ցուցադրմանը, ինչը հետագայում կարող է օգնել նրանց մասնագիտական կողմնորոշման հարցում:

Յուրաքանչյուր հանդիպման ընթացքում կլինի հարցուպատասխանին նվիրված հատված, որը կնպաստի աշակերտ-արվեստագետ առավել անմիջական շփմանը եւ երեխաներին հետաքրքրող հարցերի պարզաբանմանը:

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ՍՊԻՏԱԿՈՒՄ ՀԻՄՆՎԵԼ Է ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Սպիտակ մանուշակ» փոքրիկ սոցիալական ձեռնարկատիրությունը Սպիտակ քաղաքում ստեղծում է բնական բուսական յուղեր: Արտադրությունում ստացել են 12 բույսերի էֆստրակցիաներ՝ եղինջ, երիցուկ, վարդ, ռեհան, անգամ յասաման ու խատուտիկ, բայց որոշել են որոշես հիմնական արտադրանք ունենալ լորենու, չիչխանի եւ մասուրի կորիզայուղերը:

«Սպիտակ մանուշակը» ստեղծվել է Սպիտակում գործող իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից, որը զբաղվում է կանանց եւ երեխաների իրավունքների պաշտպանությամբ:

Արտադրության աշխատակիցները կանայք են, որոնք իրավապաշտպան կազմակերպության շահառուներն են: «Սպիտակ մանուշակը» դարձել է աշխատատեղ ու կայուն եկամտի աղբյուր. առաջիկայում ցանկանում են ընդլայնել գործունեությունը եւ աշխատելու հնարավորություն ստեղծել Լոռու մարզի 50-ից ավելի կանանց համար:

«Սպիտակ մանուշակ»-ն «Ակբա ֆեդերացիա»-ի կրթական ծրագրի շահառուներից է, որի ֆինանսավորմամբ հնարավորություն է ստացել մեկ տարվա ընթացքում դառնալ Impact Hub-ի էկոհամակարգի անդամ: Ծրագրի շնորհիվ սոցիալական ձեռնարկատիրությունը դասընթացներ է անցել ու խորհրդատվություններ ստացել տարբեր ոլորտների մենթորներից:

Ապագայում ապրանքատեսականին կընդլայնեն. շուկայում որպես բուսական յուղ արտադրող դիրքավորվելուց հետո կստեղծեն եթերայուղեր՝ կոսմետիկ նպատակներով:

«Ինչո՞ւ «մանուշակ»: Փոքր լինելով՝ մանուշակի բույրն ինչքան է տարածվում, իսկ փոքր սոցիալական ձեռնարկատիրություն լինելով՝ ունենալու ենք մեծ ազդեցություն: Մեր նպատակն է կանանց աշխատանքով ապահովել, տնտեսապես հզորացնենք, լուծենք նրանց հացի խնդիրը եւ ուզում ենք՝ մեր քաղաքը հայտնի դառնա: Երբ ասում են Սպիտակ, բոլորը հիշում են երկրաշարժը: Ուզում ենք գույն հաղորդել:

Որոշել ենք զբաղվել այն բույսերով, որոնք գիտության մեջ հայտնի են, ու իրենց մասին գրականության մեջ շատ ինֆորմացիա կա»,- նշում է «Սպիտակ մանուշակ» սոցիալական ձեռնարկատիրության հիմնադիր Աշխեն Բաբայանը:

Այժմ յուղերը վաճառվում են ցուցահանդեսների ժամանակ, շուտով արտադրանքները վաճառքի կլինեն նաեւ դեղատներում եւ գեղեցկության կենտրոններում:

«Ակբա ֆեդերացիա»-ն «Ակբա» բանկի միակ նշանակալից մասնակիցն է, բանկի բաժնետոմսերում ունի 83.8 տոկոս մասնաբաժին: «Ակբա» բանկում ունեցած մասնակցության շնորհիվ՝ «Ակբա ֆեդերացիա»-ն նպաստում է Հայաստանի ողջ տարածքում գյուղատնտեսության, գյուղական շրջաններում փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանը, համայնքների զարգացմանը, գյուղական շրջաններում եւ համայնքներում բիզնես միջավայրի աշխուժացմանն ու զարգացմանը, նշված ոլորտներում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող յուրաքանչյուր անձի բարեկեցության աճին:

ԼՈՒՐԵՐ

ԱՐԵԳԱԿԻ ԽԱՎԱՐՈՒՄ

Այս շաբաթ երկնային հազվագյուտ իրադարձություն տեղի կունենա: Խոսքը Արեգակի հիբրիդային խավարման մասին է, որը տեղի կունենա հինգշաբթի՝ ապրիլի 20-ին, երբ Լուսինը կհայտնվի Երկրի ու Արեգակի միջեւ եւ կփակի արեւի լույսը դեպի Երկիր:

Այս տեսակի խավարման դեպքում արեւի ամբողջական խավարումից անցում է կատարվում դեպի օղակաձեւ (օղաձեւ) խավարման, երբ Լուսնի ստվերն սկսում է շարժվել Երկրի մակերեւույթով:

Խավարումը տեսանելի կլինի Խաղաղ օվկիանոսի հարավային շրջաններում, այնուհետեւ Լուսնի ստվերը կանցնի արեւմտյան Ավստրալիայի, Արեւելյան Թիմորի եւ Ինդոնեզիայի վրայով: Խավարումը կսկսվի ապրիլի 20-ին՝ ժամը 01:36 GMT (Երեւանի ժամանակով 04:36), եւ կավարտվի նույն օրը՝ ժամը 06:59 GMT (Երեւանի ժամանակով 10:59):

Արեւի խավարումը ուղիղ կհեռարձակվի յութուբյան մի քանի ալիքներով:

Երկրի վրա կա ընդամենը երկու տեղ, որտեղից հնարավոր կլինի դիտել, թե ինչպես է հիբրիդային խավարումն օղակաձեւից անցնում ամբողջականի, այնուհետեւ նորից օղակաձեւի: Ցավոք, երկուսն էլ Խաղաղ օվկիանոսի հեռավոր վայրերում են:

Արեգակի վերջին հիբրիդային խավարումը տեղի է ունեցել 2013-ին, իսկ հաջորդը տեղի կունենա 2031-ին: Դրանից հետո արեւի հիբրիդային խավարում դիտելու համար մարդիկ ստիպված կլինեն սպասել մինչեւ 2164-ի մարտի 23-ը:

Նշենք, որ խավարման ժամանակ Արեւին անզեն աչքով նայել չի կարելի, այն կարող է անդառնալի վնաս հասցնել տեսողությանը: Դրա համար կան հատուկ ապակիներ, ֆիլտրեր, տեսախցիկներ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ «ԱԿԲԱ» ԲԱՆԿԻՑ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՕՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ խորհուրդը 2023 թվականի ապրիլի 12-ի նիստում որոշում է ընդունել տեղափոխել բանկի բաժնետերերի 2023 թվականի տարեկան ընդհանուր ժողովի անցկացման օրը, որը նախատեսված էր անցկացնել 2023 թվականի ապրիլի 27-ին: «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ տարեկան ընդհանուր ժողովի անցկացման օրվա, վայրի եւ այլ մանրամասների մասին հայտարարությունը լրացուցիչ կհրապարակվի մամուլում, բանկի կայքէջում, ինչպես նաեւ կուղարկվի բոլոր բաժնետերերի էլեկտրոնային փոստի հասցեներին:

● *Ապրիլի 20-ին Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի կունենա «Հայ կոմպոզիտորական արվեստի 14-րդ փառատոն» փակման համերգը: Տոմսերի արժեքը՝5000-10000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչպես է աշխատող կանանց տրամադրվում հղիության եւ ծննդաբերության արձակուրդ:

Մետաքսյա Մարգարյան (24 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Դիմողի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ աշխատող կանանց տրամադրվում է հղիության եւ ծննդաբերության արձակուրդ՝ 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության), 155 օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության)՝ բարդ ծննդաբերության, 180 օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում:

Այդ արձակուրդը հաշվարկվում է միասին եւ կնոջը տրամադրվում է ամբողջությամբ: Ժամանակից շուտ ծննդաբերելու դեպքում հղիության արձակուրդի չօգտագործված օրերը գումարվում են ծննդաբերության արձակուրդի օրերին: Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված աշխատողին տրամադրվում է արձակուրդ որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին որդեգրելու կամ երկու եւ ավելի նորածնի խնամակալ նշանակվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

Փոխնակ մոր միջոցով երեխա ունեցած աշխատողին (երեխայի կենսաբանական մորը) տրամադրվում է արձակուրդ երեխայի ծնվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին երեխա ծնվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայտնում ենք, որ ամենամյա արձակուրդը չօգտագործելու համար դրամական հատուցումը վճարվում է աշխատանքային պայմանագիրը լուծելիս: Հատուցման չափը որոշվում է տվյալ ժամանակահատվածի համար տրամադրման ենթակա ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի քանակով: Եթե աշխատողին ամենամյա արձակուրդը չի տրամադրվել մեկ տարուց ավելի ժամանակահատվածով, ապա հատուցումը վճարվում է չօգտագործված բոլոր արձակուրդների համար:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ կարող են արդյոք պետության կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը տրամադրվել կառուցապատման իրավունքով: Եվ ուզում եմ իմանալ, թե ինչպես կարող է տնօրինվել հողամասի կառուցապատման իրավունքը:

Հունան Մուրադյան (51 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերը կառուցապատման իրավունքով տրամադրվում են միայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերից: Կառուցապատման իրավունք ունեցող անձը կարող է այդ իրավունքը տնօրինել՝ փոխանցել այլ անձի, ազատորեն օտարել, գրավ դնել այն, ինչպես նաեւ կատարել այլ գործարքներ կառուցապատման իրավունքի նկատմամբ: (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 2041-րդ հոդված):

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կառուցապատման իրավունքը անձի իրավունքն է այլ անձի պատկանող հողամասում քաղաքաշինական նորմերի ու կանոնների, ինչպես նաեւ հողամասի նշանակության վերաբերյալ պահանջների պահպանմամբ, սահմանված կարգով կառուցել շենքեր եւ շինություններ, դրանք վերակառուցել կամ քանդել եւ կառուցապատման իրավունքի գործողության ժամկետի ընթացքում տիրապետել եւ օգտագործել այդ գույքը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

65 կգ քաշային կարգում ազատ ոճի ըմբշամարտի հավաքականի անդամ Վազգեն Թեւանյանը հռչակվել է Եվրոպայի չեմպիոն:

Եզրափակչում մեր ըմբիշը 12-1 հաշվով հաղթեց բուլղարացի Նաիմին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 7 +15 + 19
Կոտայքի լեռներ	+ 4 + 6 +14 + 17
Կոտայքի նախալեռներ	+ 8 + 10 +19 + 22
Գեղարքունիք	+ 3 + 7 +14 + 17
Լոռի	+ 4 + 7 +18 + 22
Տավուշ	+ 7 + 9 + 20+ 24
Արագածոտնի լեռներ	+ 2 + 5 +13 + 16
Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 11 +19 + 24

Արարատ	+ 9 + 12 +24 + 26
Արմավիր	+ 9 + 11 +23 + 25
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 +13 + 16
Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 10 +22 + 26
Սյունիքի հովիտներ	+ 8 + 11 +23 + 26
Սյունիքի նախալեռներ	+ 4 + 6 +16 + 21
Արցախ	+ 6 + 9 +22 + 25
Երեւան	+ 9 + 11 +23 + 25

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **18.04.2023**
Հասցեն՝ Գերաքրքրիչի փող. ք. Վարդենիս, վ. Հանքարձոնյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*